



ԱՌՈՂՋԱՊԱՅՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԸ COVID-19-Ի ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Հանրային Առողջապահության Հրամանը Շտապ Կարանտինի Վերաբերյալ Վերանայված հրամանը թողարկվել է 2020թ.-ի Հունիսի 23-ին:

Այս հրամանը փոխարինում է Հանրային Առողջապահության Շտապ Կարանտինի Վերաբերյալ 2020թ.-ի Հունիսի 1-ի հրամանին:

Այս հրամանն ուժի մեջ է՝ մինչև Առողջապահության Պատասխանատուի կողմից դրա չեղարկումը:

ՈՎ ՊԵՏՔ Է ՀԵՏԵՎԻ ԱՌՈՂՋԱՊԱՅՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ԱՅՍ ՀՐԱՄԱՆԻՆ

Բոլոր անձանցից, ովքեր բնակվում են Լոս Անջելես Շրջանի Առողջապահության Իրավասության շրջանակում և սերտ շփում են ունեցել որևէ մարդու հետ, ում մոտ ախտորոշվել է կամ հավանական է, որ COVID-19 ունի՝ նրա վարակիչ լինելու ընթացքում, պահանջվում է ինքնակարանտինում մնալ և հետևել սույն Հրամանի բոլոր հրահանգներին: Սա արվում է այն բանի համար, որ այդ շփումը նրանց COVID-19 զարգացնելու և տարածելու վտանգի տակ է դնում:

ԻՆՉ Է ՁԵՉՆԻՑ ՊԱՅԱՆՉՎՈՒՄ ԱՆԵԼ, ԵՅԵ ԴՈՒՔ ՍԵՐՏ ՇՓՈՒՄ ԵՔ ՈՒՆԵՑԵԼ ՄԻ ՍԱՐԴՈՒ ՀԵՏ, ՈՎ ՈՒՆԻ ԿԱՍ ՀԱՎԱՆԱԿԱՆ Է, ՈՐ ՈՒՆԻ COVID-19

COVID-19-ի տարածումը կանխելու համար, Լոս Անջելես Շրջանի Առողջապահության Պատասխանատուն («Առողջապահության Պատասխանատու») սույնով պահանջում է ձեզ անհապաղ.

- a) Ինքնակարանտինում մնալ և
- b) Ինքնամեկուսանալ, եթե հիվանդանաք և ձեզ մոտ ի հայտ գա ջերմություն, հազ կամ շնչարգելություն, և
- c) Հետևել այս Հրամանի բոլոր ցուցումներին:

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Եթե դուք սերտորեն շփվել եք որևէ անձի հետ, ով ախտորոշվել է կամ հավանական է, որ ունի COVID-19, ինչպես սահմանվում է այս Հրամանով, ձեզնից պահանջվում է հետևել այս ցուցումներին:

1. Մնացեք ինքնակարանտինում այնքան, մինչև այլևս COVID-19 տարածելու վտանգ չեք ներկայացնում

Դուք պետք է կարանտինում մնաք (մնաք ձեր տանը կամը այլ բնակավայրում) մինչև այլևս COVID-19 տարածելու վտանգ չեք ներկայացնում: Մինչ այդ պահը, դուք չեք կարող հեռանալ ձեր կարանտինի վայրից կամ մուտք գործել որևէ հանրային կամ մասնավոր վայր, բացառությամբ՝ անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու նպատակով: Սակայն, եթե դուք առողջապահության կամ առաջին արձագանքման ոլորտի աշխատող եք և ախտանիշներ չունեք, դուք կարող եք հետևել ձեր գործատուի կողմից սահմանված աշխատանքի վերադառնալու արձանագրություններին:

Ձեզնից պահանջվում է, որ դուք ինքնակարանտինում մնաք, որովհետև հավանական է, որ դուք COVID-19-ով վարակված լինեք: Եթե վարակված եք, դուք կարող եք հեշտորեն փոխանցել COVID-19-ը ուրիշներին, ներառյալ՝ այն մարդկանց, ովքեր ծանր հիվանդանալու վտանգի տակ են, ինչպիսիք են՝ ավելի տարեցները և [բժշկական խնդիրներ](#) ունեցողները:

Մերտ շփումների (կոնտակտների) սահմանումը: Այս Հրամանի նպատակների համար «Մերտ շփումներ» (կոնտակտներ) համարվում են բոլոր այն մարդիկ, ովքեր շփվել են COVID-19-ով վարակված կամ հավանաբար վարակված («վարակված անձ») անձի հետ՝ նրա վարակիչ եղած ժամանակահատվածում*:

- a) Մարդ, ով վարակված անձից 6 ոտնաչափ հեռավորության վրա է գտնվել առնվազն 15 րոպե, կամ
- b) Մարդ, ով չպաշտպանված շփում է ունեցել վարակված անձի մարմնի հեղուկների և/կամ արտազատուկների հետ, օրինակ՝ նրա վրա հագացել կամ փռոտացել են, նույն սպասքից է օգտվել, վարակվածի թքի հետ է շփվել կամ խնամք է տրամադրել՝ առանց համապատասխան պաշտպանիչ հանդերձանքի կիրառման

* Վարակված անձը COVID-19 ունեցող ցանկացած անձն է կամ նա, ում ախտանիշների պատճառով, կասկածվում է, որ COVID-19 ունի: Վարակված անձիք համարվում են վարակիչ իրենց ախտանիշներն ի հայտ գալուց 2 օր առաջ, մինչև այն պահը, երբ նրանցից այլևս չի պահանջվում մեկուսանալ (ինչպես նկարագրված է [«Տնային մեկուսացման ցուցումներ COVID-19-ով վարակված մարդկանց համար»](#)): COVID-19 ախտորոշիչ (վիրուսային) թեստի դրական պատասխան ունեցող, բայց ախտանիշներ չունեցող մարդը համարվում է վարակիչ առաջին դրական թեստը հանձնելուց 2 օր առաջ և այդ թեստը հանձնելուց հետո 10 օր:

Անձը համարվում է COVID-19-ով ախտորոշված կամ հավանական է, որ ունի COVID-19, եթե

- a) Նա ստացել է COVID-19-ի ախտորոշիչ (վիրուսային) թեստի դրական պատասխան և/կամ
- b) Նա տեղեկացվել է բժիշկի կողմից, որ հավանաբար COVID-19 ունի և/կամ
- c) Նա COVID-19-ի հետ համընկնող ախտանիշներ ունի (օր.՝ ջերմություն, հազ կամ շնչարգելություն):

Ինքնակարանտինի ցուցումներ: Ձեզնից պահանջվում է հետևել “COVID-19-ով Վարակվածների Մերտ Կոնտակտների համար նախատեսված Տնային Կարանտինի ցուցումներին”, որոնք առկա են [անգլերեն](#), [իսպաներեն](#) և [այլ լեզուներով](#):

Ինքնակարանտինի տևողությունը: Ձեզնից պահանջվում է ինքնակարանտինում մնալ COVID-19-ով վարակված կամ հավանաբար վարակված անձի հետ ձեր վերջին շփումից հետո 14 օր: Դուք պետք է կարանտինում մնաք այդ ամբողջ 14 օրվա ժամանակահատվածում, քանի որ դա է այն ժամանակահատվածը, որի ընթացքում COVID-19-ի ախտանշանները ի հայտ են գալիս (ինկուբացիոն ժամանակահատված): Այս ընթացքում դուք կարող եք տարածել COVID-19՝ նույնիսկ եթե ախտանիշներ չունեք կամ թեթև ախտանիշներ ունեք:

2. Եթե դուք հիվանդանաք, ինքնամեկուսացեք, մինչև այլևս COVID-19 տարածելու վտանգ չներկայացնեք

Եթե դուք հիվանդանաք, և ձեզ մոտ ի հայտ գա ջերմություն, հազ կամ շնչարգելություն, դուք պետք է ինքնամեկուսանաք տանը և այլ մարդկանցից հեռու և հետևեք COVID-19-ի վերաբերյալ Լոս Անջելես Շրջանի [«Հանրային Առողջապահության Շտապ Մեկուսացման Հրամանին»](#) և



«COVID-19-ով վարակված մարդկանց համար նախատեսված Տնային մեկուսացման ցուցումներին», որոնք առկա են [անգլերեն](#), [խապաներեն](#) և [այլ լեզուներով](#): Այս գործողությունները պահանջվում են, քանի որ ըստ ձեր ախտանիշների, հավանական է, որ դուք COVID-19 ունեք և կարող եք տարածել վիրուսը ուրիշներին:

Եթե ձեզ մոտ ի հայտ գա ջերմություն, հազ, շնչարգելություն կամ ցանկացած այլ COVID-19-ի [ախտանիշներ և նշաններ](#), ցանկալի է, որ կապ հաստատեք ձեր բուժաշխատողի, կլինիկական խորհրդատվական գծի կամ հեռաբժշկության մատակարարի հետ՝ բժշկական գնահատման համար և քննարկելու, թե արդյոք դուք պետք է թեստավորվեք (եթե դեռ ձեզ չեն առաջարկել): Եթե դուք ավելի տարեց եք և/կամ [բժշկական խնդիրներ](#) ունեք, որոնք կարող են ձեզ ծանր հիվանդանալու վտանգի տակ դնել, կարևոր է ձեր բուժաշխատողին վաղ տեղեկացնել, եթե դուք նոր կամ վատթարացող ախտանիշներ ունեք:

Անհապաղ դիմեք շտապ բժշկական օգնության, եթե շնչարգելություն, կրծքավանդակում ճնշում կամ ցավ կամ ցանկացած այլ ախտանիշներ ունեք, որոնք ձեր համար ծանր կամ մտահոգիչ են:

ՀՐԱՄԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն հրամանի նպատակն է օգնել դանդաղեցնելու Նոր Կորոնավիրուսի (COVID-19) տարածումը, պաշտպանել ավելի բարձր վտանգի տակ գտնվող անձանց և պաշտպանել առողջապահական համակարգը՝ շտապ օգնության սենյակներում և հիվանդանոցներում հիվանդության դեպքերի աճի մեծացումից: Կալիֆոռնիան արտակարգ դրության մեջ է COVID-19 համավարակի պատճառով, և COVID-19-ը էական վտանգ է ներկայացնում Լոս Անջելեսի Շրջանի հասարակության առողջության համար: Այս վիրուսը կարող է հեշտությամբ տարածվել միմյանց հետ սերտ շփման մեջ գտնվող մարդկանց միջև: Բոլորը հիվանդանալու վտանգի տակ են, բայց որոշ մարդիկ ավելի ծանր հիվանդանալու (ներառյալ՝ թոքաբորբը կամ օրգանների անբավարարությունը) կամ մահվան վտանգի տակ են՝ նրանց տարիքի, ֆիզիկական վիճակի և/կամ առողջական դրության պատճառով: Գոյություն չունի COVID-19-ից պաշտպանող պատվաստանյութ և չկա այս հիվանդության բուժման համար հաստատված դեղորայք:

Այս հրամանը հիմնված է ներկայումս հայտնի և մատչելի գիտական ապացույցների և լավագույն փորձի վրա: Մեկուսացումը և կարանտինը խորհուրդ են տրվում Հիվանդությունների Վերահսկման և Կանգարգելման Կենտրոնների (CDC) և հանրային առողջապահության այլ մասնագետների կողմից՝ որպես COVID-19-ի տարածումը կանխող ապացուցված ռազմավարություն:

ԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Լոս Անջելես Շրջանի Առողջապահության Պատասխանատուի այս Հրամանը ստեղծվել է Կալիֆոռնիայի Առողջապահության և Անվտանգության Օրենքների 101040, 101085, 120175, 120215, 120220, և 120225 բաժինների իրավասությունների ներքո: Առողջապահության Պատասխանատուն կարող է հավելյալ գործողություններ (ներ) ձեռնարկել, որոնք կարող են ներառել քաղաքացիական կալանք կամ պահանջել տվյալ անձին մնալ առողջապահական հաստատությունում կամ այլ վայրում՝ պաշտպանելու հասարակության առողջությունը, եթե այս Հրամանին ենթակա անձը խախտի կամ չենթարկվի այս Հրամանին: Սույն Հրամանի խախտումը հանցագործություն է, որը պատժվում է ազատազրկմամբ, տուգանքով կամ միաժամանակ երկու եղանակով:



ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Տնային կարանտինի ցուցումներ COVID-19 ունեցողների սերտ կոնտակտների համար <http://ph.lacounty.gov/covidquarantine> (անգլերեն և այլ լեզուներով) և <http://ph.lacounty.gov/covidcuarentena> (իսպաներեն):
- **Եթե դուք հիվանդանաք և ձեզ մոտ ի հայտ գա ջերմություն, հազ, կամ շնչարգելություն**
- Տնային մեկուսացման ցուցումներ` COVID-19 ունեցող մարդկանց համար <http://ph.lacounty.gov/covidisolation> (անգլերեն և այլ լեզուներով) և <http://ph.lacounty.gov/covidaislamiento> (իսպաներեն)
- Հանրային Առողջապահության Շտապ Մեկուսացման Հրաման. http://ph.lacounty.gov/media/Coronavirus/docs/HOO/HOO_Coronavirus_Blanket_Isolation.pdf (անգլերեն) և http://ph.lacounty.gov/media/Coronavirus/docs/HOO/HOO_Coronavirus_Blanket_Isolation-Armenian.pdf (հայերեն)

ՀՐԱՄԱՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Եթե այս Հրամանի հետ կապված հարցեր ունեք, զանգահարեք Լոս Անջելես Շրջանի Առողջապահության Վարչություն (833) 540-0473 հեռախոսահամարով և սեղմեք 2:

ՀՐԱՄԱՅՎՈՒՄ Է.

7/23/2020

Մունտու Դեյվիս, M.D., M.P.H.

Ամսաթիվ

Առողջապահության Պատասխանատու, Լոս Անջելես Շրջան